

11. ԽՈՐԱԳԵՏ ՄԱՐԴԸ

Կըլի, չըլի մե մարթ կըլի, մե կնիկ կըլի, տանցը մե էծ կըլի:

Մեկ օր կնիկ կասի մարթուն.—Տար էծ ծախի՛, համ է՛ծ պե, համ փո՛ղ:

Էտ մարթը կըվերցի, կըկա չորագչու կուչտ, կասի.—Էծ տամ քեզի, մե իմ փորով խա՛ց տու, ուտեմ:

Չորագչին կասի՝ աղե՛կ:

Խաց կուտի կըպրծնի էտ մարթ, էծու անգճեն կըքաչի թեխ տուս, չորագչին կասի.—Էտ ի՞նչ ես անելըի, ախ էծը իմն ի:

Էծու տեր կասի.—Տանեմ էծ ծախեմ, պերեմ, քո խացի կին տամ:

Կէթա քաբաբչու տուն, կասի.—Էծ տամ քեզի, մե փորովս քաբաբ ուտեմ:

Քաբաբչին կասի՝ աղե՛կ:

Քաբաբ կուտի կըպրծնի, էծու անգճեն կըքաչի թեխ տուս, քաբաբչին կասի.—Ո՞ւր ես տանելըի էծը, ախ իմն ի:

—Էծ տանեմ ծախեմ, պերեմ, քո փող տամ,—կասի էծու տեր, տեն կըլի, կէթա մեյխանաչու տուն, էլ էնենց կանի:

Մութը կընի, կէթա բազրգանի տուն, փթրի չարի մեչ կըմնա: Կիչկա մե կնիկ էթալըի էն կըլոխ, իկալի էս կլոխ: Տուռ թփին, չորագչին էկավ, կնաց օթաղ: Էլ տուռ թփին, քաբաբչին էկավ: Էլ տուռ թփին, մեյխանաչին էկավ:

Մե սհաթ կըմնա. քաբաբչին, մեյխանաչին ինան չորագչին էկան, որ էթան, իրեքին էլ կանչեց, ասաց.—Հարե՛ք, ծեր փողեր տամ:

Մե քիչ մնաց, բազրգանն էկավ կնաց օթաղ:

Էծու տերն ասաց չորագչուն.—Քանի՞ թուման փող կըտաս, որ բազրգանին չասեմ, թե տու կնացիր ես էր դար կնգան կուչտ:

—Խինգ թուման կըտամ,—ասաց չորագչին:

Էծու տերն էծու անգամ օլրեց, էծ բոռաց:

Բազրգան ասաց.—Էտ ի՞նչ էծու ծեն ի:

Կնիկն ասաց.—Քուչայեն ընցիր ես, էծ ի պատահե քեզի, մկա էն ծեն ինգե անգամտ:

—Տո՞ւ իշքան կըտաս, մեյխանաչի՛,—ասաց էծու տեր։

—Իրեք թումման,—ասաց։

—Բըռռ,—բոռբոռաց էծ։

Բազրգան ասաց.—Էծ կա պակ։

Կնիյն ասաց.—Քնի՛, էծու խիալին ես։

—Տո՞ւ իշքան կըտաս, քաբաբչի՛։

—Մեկ թումման,—ասաց։

Էծ բոռբոռաց։ Բազրգանը վեր թռավ տեղեն, էկավ պակ։

Էծու տերն ասաց.—Էտ իրեք քո կնգա սիրոքերն են։

Բազրգանն սպանեց կնգան, չորագչուն, քաբաբչուն ինան մեյ-խանաչուն, էծու տիրոչ փող տվեց, էծու տերն էկավ տուն։